ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«29» 10 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 250 - 25

Նախաձեռնող՝ «Ար ընդ Էվ» ՍՊԸ
ք. Երևան, Մամիկոնյանց փողոց 40/1 շ., բն. 9

Գործունեությունը՝ Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 9-րդ փողոց 19/3 հասցեում նախատեսվող արտադրական նշանակության շինության կառուցում
ք. Երևան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 250 - 25

«29» հոկտեմբերի 2025թ.

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 9-րդ փողոց 19/3 հասցեում նախատեսվող արտադրական նշանակության շինության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Ար ընդ էվ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ, /«Բ» կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Երևան քաղաք, Շենգավիթ վարչական շրջան

Ներածական մաս. Կոշիկի արտադրամասի նախագիծը նախատեսվում է իրականացնել Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 9-րդ փողոց 19/3 հասցեում՝ արտադրական նշանակության տարածքում: Նախատեսվող գործունեության տարածքի հողի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա) ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել՝ համայնքի ղեկավարի կողմից 15.03.2024թ. տրված N01/18-07/1-991-ա ճարտարապետահատակագծային առաջադրանքը, անշարժ գույքի սեփականության N31052024-01-0234 վկայականը, պատվիրատուի առաջադրանքը: Հողամասը զբաղեցնում է 0.245437 հա մակերես: Նախագիծը իրենից ներկայացնում է անտրիսոլային հարկով՝ մեկ հարկանի կոշիկի արտադրամաս: նախագծվող շինությունը բաղկացած է երկու մասնաշենքից, որոնցից մեկը 0.000 հատակագծային նիշից գտնվում է 10 մ բարձրության վրա, իսկ մյուսը՝ 8.4 մ բարձրության վրա: 0.000 հատակագծային նիշում նախատեսվում են հանդերձարաններ, սանհանգույցներ՝ աշխատակազմի համար, արտադրամաս: Նախատեսվող գործունեությունը նպատակ ունի ստեղծել բարձրորակ հայկական սպորտային կոշիկների ապրանքանիշ, որը մրցունակ կլինի ինչպես ներքին շուկայում, այնպես էլ արտահանման շուկաներում:

Սպորտային կոշիկների արտադրությունը հիմնված է լինելու որակի, տեխնոլոգիաների և նորաձևության համադրման վրա: Արտադրությունում օգտագործվելու են ժամանակակից ավտոմատացված արտադրական գծեր, որոնք ապահովելու են կայուն և բարձր արտադրողականություն: Արտադրական գործընթացի յուրաքանչյուր փուլում իրականացվելու է խիստ որակի վերահսկողություն՝ համապատասխանելու միջազգային ստանդարտներին:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասերի մակերեսը՝ 2454,37 քմ,
- կառուցապատման մակերեսը՝ 2086,29 քմ /85 %/,
- կանաչապատման մակերեսը՝ 368,08 քմ /15 %/:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը նախատեսվում է իրականացել համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտկվեն ծառեր և թփեր:

Համաձայն հաշվետվության տեղեկատվության՝ հայցվող տարածքում և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը: Հայցվող տարածքի մոտակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, տարածքն անմիջական սահմաններ չունի ԲՀՊՏ-ների հետ:

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքիերի տեղադրման համար կատարվելու է մոտ 1200 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր հանվող 800 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահովվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:Արտադրամասի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին, ջրամատակարարումը իրականացվելու է 3-րդ փողոց 146 հասցեի դիմացից անցնող ջրատարից՝ համաձայն գործող պայմանագրի, ջրահեռացումը՝ միանալով նույն հասցեի դիմացից անցնող կոյուղատարին: Շինարարության փուլում ջրցանման համար ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, այդ նպատակով պայմանագիր կնքելու համար փաստաթղթերի փաթեթը կներկայացվի ոլորտի լիազոր մարմին կամ պայմանագիր կկնքվի համապատասխան մատակարար կազմակերպության հետ (նշված գործընթացը հնարավոր կլինի կազմակերպել շինարարության թույլտվության ստացումից հետո): Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Տարածքում նախատեսվում է 7 աշխատողի համար տեղադրել 1 բիոզուգարան:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում արտադրամասի էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն գոծող պայմանագրի համաձայն:

Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության համաձայնեցմանը: Կանաչապատ տարածքների ներքին ոռոգման ցանցը նախատեսվում է իրականացնել կաթիլային եղանակով: Նախատեսվող

կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 200 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում նախատեսվում է պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը նախատեսվում է տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- շինարարական աղբը տեղափոխվելու է դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,
- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ,
- հողկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ արտանետումների (փոշի, CO, NOx) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է

հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

- տվյալ և հարակից տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգ՝ 3 ամիս մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1690000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային լսումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակմամբ: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել ամրագրված բնապահպանական պահանջներին և միջոցառումներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Նախատեսվող բազմաբնակարան շենքի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 15-Ն հրամանի և ՀՀ առողջապահության նախարարարի 2002 թվականի մայիսի 6-ի «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին» N 138 հրամանի պահանջները:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեքներ ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Շինհրապարակի արտաքին տարածքը ժամանակավոր ցանկապատել, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է ապահովել ջրցանի պարտադիր իրականացումը:
- Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ար ընդ էվ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 9-րդ փողոց 19/3 հասցեում նախատեսվող արտադրական նշանակության շինության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան